

- 33 Ուստի կրրկներ նա հանդերձանո հոգւոյն,
 Յանձնեալ զանձրն իւր հաճութեան վերնոյն,
 Զօրէն իմաստնոյ ըսպասէր մահուն,
 Առ զինքն ազատել ի պանդխտելոյն:
- 34 Բայց ըսպեղանեաց օգտութեամբն ազգու,
 Ներհուն բրժըշկաց հոգօք է՝ ըսպասու,
 Վերբատին ըղհետ աւուրց սակաւու
 Մեղմանայր անդրէն ախտ նորին հատու:
- 35 Ապա յետ աւուրց անձն իւր զօրանայր,
 Ախտն որոյ խուն ինչ իբր անկարանայր,
 Այլ երբեմն երբեմն անդրէն ըսպառնայր,
 Զապրեցուցանել ըզնա աստ յամայր:
- 36 Իւ զի հասեալ էր դարնան եղանակ,
 Առ Հրուօլմ չոգալ կարծեալ ընդունակ՝
 Համոզէր ըզնա սրբտին մեծ փափաք,
 Երթալ մեռանիլ յայն Մայրաքաղաք:
- 37 Յաւուրսն յայնոսիկ ի Վէնէտիկոյ
 Պարոն Յովհաննէս Սեղբոսեանն արգոյ
 Գրրեալ նրմա թուղթ ողջունի սիրոյ՝
 Խնդրէր զի գօնասցէ յայն շէն ի մօտոյ:
- 38 Որ եւ գրրեալ էր նրմա յայլ անդամ,
 Ըղնոյն բան փութով է՝ ըստիպմամբ յայնժամ՝
 Մինչ նեղիւր նորին խօթացեալ անդամ
 Վրտանգաւ մահու վըշտիւ յարաժամ:
- 39 Առեալ Սարգսի զայն երկրորդ թուղթ նորին՝
 Հակիւր չոգալ նախ ի շէն Վէնէտիկին,
 Այլ ըստ բրժըշկաց զըննման եւ բանին
 Մընայր աստ ի սակս ուղւոյ վրտանգին: